

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	1
1.1. Արդյունաբերություն	2
1.2. Շինարարություն	3
1.3. Ծառայություններ	4
1.4. Առևտուր	5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	6
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ	8
4. ՓՈԽԱՐԺԵՔ	9
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	10
5.1. Բյուջեի եկամուտները	10
5.2. Բյուջեի ծախսերը	12
5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը	13
5.4. Պետական պարտք	14
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	15
6.1. Գնաճ	15
6.2. Ավանդներ	16
6.3. Վարկեր	17
7. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	19
8. ԱՄՓՈՓՈՒՄ	20

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տնտեսական աճի տեմպը բավական տատանողական էր 2021 թվականի ընթացքում և արտացոլում էր տնտեսությունում առկա անորոշությունները և ճգնաժամից վերականգնման դժվարությունները: Տարեսկզբից տնտեսական վերականգնման սպասվածից ավելի բարձր տեմպը առիթ էր դարձել կառավարության անդամների համար չափազանց լավատեսական սպասումներ ձևավորելու համար, մինչդեռ մայիս ամսից սկսած տնտեսական ակտիվության տեմպը կտրուկ սկսեց դանդաղել (քանի որ բազայի էֆեկտի ազդեցությունը աստիճանաբար չեզոքանում էր): Միայն տարեվերջին՝ նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին է գրանցվել աճի որոշակի արագացում (մասամբ պայմանավորված նաև 2020թ. ցածր բազայով՝ կապված հետպատերազմյան զարգացումներով):

2021թ. դեկտեմբերին գրանցվել է ՏԱՅ-ի շուրջ 9.9% աճ, որը թեև բարձր է նախորդ ամիսների միջինի համեմատ, սակայն նոյեմբերի համեմատ դանդաղել է 3.5 տոկոսային կետով: Արդյունքում, ինչպես խոստացված երկնիշ տնտեսական աճը, այնպես էլ նույնիսկ տնտեսական վերականգնումը իրականություն չեն դարձել: 2021թ. փաստացի տնտեսական ակտիվության աճը կազմել է 5.8%, ինչը բացարձակ արժեքով ցածր է 2020թ. անկման ցուցանիշից (ՏԱՅ-ի անկումը 2020թ. կազմել է 7.5%), ինչը նշանակում է, որ նախաճգնաժամային ժամանակահատվածի համեմատ ՀՀ տնտեսությունում ստեղծված իրական թողարկումը նվազել է շուրջ 2.1%:


Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %



2021թ. ՏԱՅ-ի 5.8% աճը հիմնականում պայմանավորված է առևտրի և ծառայությունների ոլորտներում տնտեսական ակտիվության աճով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 2.7 և 1.7 տոկոսային կետ: Արդյունաբերությունը նույնպես ունեցել է դրական նպաստում ՏԱՅ-ին, որը կազմել


է 0.9 տոկոսային կետ, իսկ շինարարության նպաստումը կազմել է 0.4 տոկոսային կետ: Գյուղատնտեսության ոլորտում 2021թ. տարեկան արդյունքներով արձանագրվել է 1.1% անկում, ինչը ՏԱՑ-ի աճին հակազդել է 0.1 տոկոսային կետով:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2021թ., տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %




Արդյունաբերության ոլորտում նույնաբերին գրանցված բարձր աճի տեմպը դեկտեմբերին դանդաղել է՝ կազմելով 7.9%, որը, սակայն, նույնպես բարձր է՝ համեմատած նախորդ ամիսների հետ: Այնուամենայնիվ, 2021թ. տարեկան արդյունքներով գրանցվել է արդյունաբերության բավական ցածր՝ 3.3% աճ:

Արդյունաբերության աճին հունվար-նոյեմբեր ամիսների տվյալներով¹, զգալի նպաստում է ունեցել մշակող արդյունաբերության 2.6% աճը, որն ընդհանուր արդյունաբերության աճին նպաստել է 1.7 տոկոսային կետով: Ընդ որում, արդյունաբերության աճը զգալիորեն արագացել է՝ հունվար-հոկտեմբեր ամիսների 0.2% աճի համեմատ: Արդյունաբերության աճին նշանակալի նպաստում է ունեցել նաև «էլեկտրաէներգիա, գազի և գոլորշու մատակարարում» ճյուղի աճը, որի նպաստումը կազմել է 1.0 տոկոսային կետ: Հանքարդյունաբերությունը ունեցել է բացասական նպաստում՝ 0.1 տոկոսային կետի չափով:

1.2. Շինարարություն

Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %




Շինարարության ոլորտում աճի տեմպը դեկտեմբերին նույնպես դանդաղել է նոյեմբերի համեմատ: Շինարարության ծավալների 12-ամսյա աճը դեկտեմբերին կազմել է 8.8%՝ նոյեմբերի համեմատ դանդաղելով շուրջ 2.0 տոկոսային կետով: Արդյունքում շինարարության աճը 2021թ. կազմել է 7.4% 2020թ. համեմատ, իսկ 2019թ. համեմատ շինարարության իրական ծավալը նվազել է 2.8 %-ով:

¹ Արդյունաբերության կառուցվածքը 2021թ. հունվար-դեկտեմբեր ամիսների համար դեռևս չի հրապարակվել:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %




Ծառայությունների աճը դեկտեմբերին որոշակիորեն դանդաղել է: 2021թ. դեկտեմբերին ծառայությունների աճը կազմել է 12.3%՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով շուրջ 4.5 տոկոսային կետով: Պետք է նշել, սակայն, որ դեկտեմբերին առկա է եղել նաև ցածր բազա, որ պետք է հանգեցներ աճի արագացմանը, սակայն դա տեղի չի ունեցել: Արդյունքում, 2021թ. ծառայությունների աճը կազմել է 7.8%, սակայն 2019թ. համեմատ ծառայությունների իրական ծավալը կրճատվել է շուրջ 16.6%-ով:

Հունվար-նոյեմբեր ամիսների տվյալներով² ծառայությունների աճը կազմել է 7.3%, որին առավելապես նպաստել է «կացություն և հանրային սննդի կազմակերպում» ենթաճյուղի շուրջ 61.1% աճը (նպաստումը կազմել է 3.7 տոկոսային կետ): Ծառայությունների ոլորտի աճին շուրջ 7.1 տոկոսային կետով հակազդել է «մշակույթ, զվարճություններ և հանգիստ» ենթաճյուղի շուրջ 33.6% անկումը: Ծառայությունների մնացած ենթաճյուղերն ունեցել են դրական նպաստում, որոնցից առավել նշանակալի են եղել տրանսպորտի, առողջապահության, ինչպես նաև տեղեկատվության և կապի ենթաճյուղերի նպաստումները, որոնք կազմել են համապատասխանաբար 2.6, 2.2 և 2.1 տոկոսային կետ:

² Ծառայությունների կառուցվածքը 2021թ. հունվար-դեկտեմբեր ամիսների համար դեռևս չի հրապարակվել:

1.4. Առևտուր


Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %



Առևտրի ոլորտում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գրանցված բարձր աճի տեմպերը չեն պահպանվել, և դեկտեմբերին աճի տեմպը կտրուկ նվազել է: Դեկտեմբերին առևտրի ծավալն աճել է շուրջ 3.6%-ով, մինչդեռ 2020թ. նույն ամսում առևտուրը նվազել էր 17.4%-ով: Ստացվում է, որ 2021թ. դեկտեմբերին առևտրի իրական ծավալը 2019թ. դեկտեմբերի համեմատ նվազել է շուրջ 14.4%-ով: Նախորդ ամիսներին 2019թ. նույն ամիսների համեմատ առևտրի ծավալները նույնպես ցածր էին, սակայն ոչ այդ չափով: Նման անկումը, բնականաբար, կապված է ամանորյա տոներին հանգստյան օրերի կրճատմամբ, ինչի պատճառով դեկտեմբերին կտրուկ նվազել է առևտրի ծավալները: Այսինքն, ստացվում է, որ տնտեսական աճի արագացմամբ հիմնավորվող օրենսդրական փոփոխությունը հանգեցրել է տնտեսական ակտիվության դանդաղմանը առևտրի ոլորտում: 2021թ. տարեկան արդյունքով, առևտրի իրական աճը 2020թ. համեմատ կազմել է 7.5%, իսկ 2019թ. համեմատ առևտրի ծավալները նվազել են 7.6%-ով:

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճ, %



Ապրանքների արտահանման ծավալների կտրուկ աճը նույնպես չի պահպանվել, և դեկտեմբերին արտահանման աճի տեմպը դանդաղել է՝ կազմելով 14.3%: 2021թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին արտահանման աճը կազմել է 19.1%՝ հունվար-նոյեմբերի համեմատ դանդաղելով 0.6 տոկոսային կետով:


Հունվար-նոյեմբեր ամիսների տվյալներով³, արտահանման 19.4% աճից 6.0 տոկոսային կետը պայմանավորված է եղել հանքահումքային արտադրանքի արտահանման շուրջ 18.3% աճով (ինչն էլ իր հերթին պայմանավորված է մետաղների միջազգային գների աճով): Արտահանմանը զգալի դրական նպաստում են ունեցել նաև «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալների 65.7% աճը, որի նպաստումը կազմել է 5.7 տոկոսային կետ: Դրական նպաստող ապրանքախմբերի շարքում են եղել նաև «բուսական ծագման արտադրանք» և «պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբերի աճերը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 2.3, 2.5 տոկոսային կետ:

Արտահանման աճին շարունակել են հակազդել «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» (անկումը՝ 12.2%) և «սարքեր և ապարատներ» (անկումը՝ 37.3%) ապրանքախմբերի արտահանման ծավալների անկումը, որոնք ընդհանուր արտահանման աճին հակազդել են համապատասխանաբար 1.8 և 0.8 տոկոսային կետով:

³ Արտահանման կառուցվածքը 2021թ. հունվար-դեկտեմբեր ամիսների համար դեռևս չի հրապարակվել:

Արտահանման նախորդ ամիսների ցուցանիշները ՀՀ ՎԿ կողմից վերանայվել են, ինչի արդյունքում 0.1 տոկոսային կետով բարելավվել են հունվարից հունվար-մարտ ամիսների կուտակային ցուցանիշները և 0.2-0.3 տոկոսային կետով բարելավվել են հունվար-ապրիլից հունվար-նոյեմբեր ամիսների ցուցանիշները:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճ, %



Դեկտեմբերին ապրանքների ներմուծման ծավալների աճի տեմպը նոյեմբերի համեմատ շուրջ 1.8 անգամ կրճատվել է: 2021թ. դեկտեմբերին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ ներմուծման ծավալներն աճել են 27.7%-ով՝ նոյեմբերի համեմատ դանդաղելով շուրջ 22.1 տոկոսային կետով: Հունվար-դեկտեմբեր ամիսների ներմուծման աճը արագացել է՝ կազմելով 16.9%, սակայն ներմուծման ծավալները տարվա արդյունքներով ցածր են մնացել 2019թ. ցուցանիշից՝ շուրջ 3.8%-ով:

2021թ. հունվար-նոյեմբեր ամիսների տվյալներով⁴ ներմուծման ծավալների աճին զգալի նպաստում են ունեցել «հանքահումքային արտադրանք», «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» և «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբերի ներմուծման ծավալների աճերը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 4.0, 2.2 և 2.1 տոկոսային կետ:

ՀՀ ՎԿ կողմից վերանայվել են նախորդ ամիսների ներմուծման ցուցանիշները, ինչի արդյունքում շուրջ 0.1-ից 0.2 տոկոսային կետով բարելավվել են հունվար-ապրիլից մինչև հունվար-հոկտեմբեր ամիսների կուտակային


⁴ Ներմուծման կառուցվածքը 2021թ. հունվար-դեկտեմբեր ամիսների համար դեռևս չի հրապարակվել:

ցուցանիշները, իսկ հունվար-նոյեմբեր ժամանակահատվածի ներմուծման աճի ցուցանիշը բարելավվել է 0.5 տոկոսային կետով:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

Դեկտեմբերին միջին անվանական աշխատավարձերի աճի տեմպը փոքր-ինչ արագացել է⁵: Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում հունվար-դեկտեմբեր ամիսներին նախորդ տարվա համեմատ աճել է 7.6%-ով (հունվար-նոյեմբերի աճը կազմել էր 7.0%)՝ կազմելով 204,048.0 դրամ: Պետական հատվածում միջին աշխատավարձն աճել է 5.2%-ով և կազմել 179,174.0 դրամ, իսկ մասնավոր հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 8.4%-ով՝ կազմելով 215,674.0 դրամ:


Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2020-2021թթ. հունվար-դեկտեմբեր ամիսներին, %



⁵ Քանի որ ՀՀ ՎԿ կողմից օպերատիվ տեղեկատվությունը (ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ընթացիկ-օպերատիվ ամփոփմամբ ստացված նախնական հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները) հրապարակվել են ամսվա վերջին օրը՝ հունվարի 31-ին, հասանելի է նաև հաշվետու ամսվա աշխատավարձերի վերաբերյալ տեղեկատվությունը:

4. ՓՈԽԱՐԺԵՔ

**Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը, %
(աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում)**



2021 թվականին ՀՀ դրամը միջինում արժեզրկված է եղել ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ, սակայն տարեվերջին արժեզրկման միտումը գրեթե չեզոքացել է: Հունվար-դեկտեմբերին նախորդ տարվա համեմատությամբ ՀՀ դրամն արժեզրկվել է ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ, սակայն վերջին ամիսներին արժեզրկման տեմպը զգալիորեն դանդաղել է: Արժեզրկման չափը ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ միջինում կազմել է համապատասխանաբար 2.9% և 6.4%: Ռ-Դ

ռուբլու նկատմամբ նույնպես ՀՀ դրամը միջինում եղել է արժեզրկված, որի չափը կազմել է 0.6%:

Դեկտեմբերի վերջի դրությամբ պատկերը բավական փոխվել է: Այսպես, քանի որ ՀՀ դրամը կտրուկ արժեզրկվել էր 2020թ. վերջում, իսկ 2021թ. երկրորդ կեսից սկսել էր արժևորվել, 2021թ. դեկտեմբերի վերջին արդեն ՀՀ դրամը զգալիորեն արժևորված է եղել: ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորման չափը կազմել է 8.8%, եվրոյի նկատմամբ՝ 18.2%, իսկ ՌԴ ռուբլու նկատմամբ՝ 9.3%: Տարեվերջյան արժևորումը դրականորեն կազդի պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցության վրա, սակայն դրամի արժևորված մակարդակի երկարաժամկետ պահպանումը բացասաբար կարող է անդրադառնալ ՀՀ ապրանքների մրցունակության վրա:


5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ⁶

5.1. Բյուջեի եկամուտները

Պետական բյուջեի ընդհանուր եկամուտների աճը 2021թ. կազմել է 7.9%, իսկ հարկային եկամուտներն ունեցել են առաջանցիկ աճի տեմպ: Պետական բյուջեի ընդհանուր եկամուտները 2021թ. նախորդ տարվա համեմատ աճել են 7.9%-ով, իսկ հարկային եկամուտների աճը կազմել է 14.6%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 1.2 տոկոսային կետով: Պետական բյուջեի ոչ հարկային եկամուտները 2021թ. նվազել են 30.6%՝ պայմանավորված այն հանգամանքով, որ 2020թ. վերջին ամիսներին պետական բյուջեի ոչ հարկային եկամուտները կտրուկ աճել էին՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամից պետական բյուջե փոխանցված գումարների հաշվին: Պաշտոնական դրամաշնորհները նվազել են շուրջ 76.6%-ով, ինչը մասամբ կապված է նախորդ տարվա վերջին ամիսներին պատերազմական իրավիճակով պայմանավորված զգալի դրամաշնորհների ստացմամբ, ինչպես նաև տարեվերջին դրանց շոշափելի թերակատարմամբ:

⁶ Պետական բյուջեի ցուցանիշների աճերի հաշվարկն իրականացվել է դրանց «հազար դրամներով» արտահայտված ցուցանիշների կիրառմամբ: Գծապատկերներում ներկայացված «մլրդ դրամ» արտահայտությամբ ցուցանիշների կիրառման դեպքում աճի ցուցանիշները կարող են փոքր-ինչ տարբեր լինել:

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների կուտակային աճը, %



Հարկային եկամուտների աճը հիմնականում պայմանավորված է եղել ԱԱՀ-ի (աճը՝ 17.9%), պետական տուրքի (աճը՝ շուրջ 2 անգամ կամ 100.0%) և այլ հարկային եկամուտների (որոնց կազմում են ներառված դրոշմանիշային վճարները, աճը՝ շուրջ 93.9%) գծով հարկային մուտքերի աճով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 6.1, 2.4 և 1.6 տոկոսային կետ: Հարկ է նշել, որ վերջիններս, մասնավորապես՝ պետական տուրքի և դրոշմանիշային վճարների աճերը, օրենսդրական փոփոխությունների արդյունք են, առանց որոնց հարկային եկամուտները նման բարձր աճի տեմպ չէին ունենա:


Ընդ որում, եթե հաշվի չառնենք նշված օրենսդրական փոփոխությունների ազդեցությունը, ապա հարկերի աճը կլինի շուրջ 10.6%, մինչդեռ տնտեսական ակտիվության անվանական աճը, ըստ նախնական գնահատականի, կլինի շուրջ 13.4% (5.8% ՏԱՑ-ի իրական աճի և 7.2% միջին գնաճի պայմաններում): Ստացվում է, որ հարկերի աճը հետ է մնում տնտեսական ակտիվության աճից, ինչն էլ արտացոլում է հարկային վարչարարության վատթարացումը:

Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2020թ. հունվար-դեկտեմբեր		2021թ. հունվար-դեկտեմբեր	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	-5.4	-5.4	14.6	14.6
ԱԱՀ	-0.6	-0.2	17.9	6.1
Շահութահարկ	-17.9	-2.2	6.6	0.7
Եկամտային հարկ	0.2	0.1	3.7	1.1
Ակցիզային հարկ	-3.1	-0.3	-8.4	-0.8
Շրջանառության հարկ	-8.3	-0.2	21.9	0.4
Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	-8.9	-0.4	18.2	0.7
Մաքսատուրք	-28.3	-1.8	24.3	1.2
Սոցիալական վճար	32.6	0.4	73.5	1.3
Այլ հարկային եկամուտներ	14.8	0.2	93.9	1.6
Պետական տուրք	-27.1	-0.8	100.0	2.4

5.2. Բյուջեի ծախսերը

Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ




Պետական բյուջեի ծախսերի աճի տեմպը շարունակել է դանդաղել: Վերջինս հիմնականում պայմանավորված է բազայի էֆեկտով, քանի որ նախորդ տարվա վերջին ամիսներին իրականացվել էին զգալի չափով ծախսեր՝ կապված Արցախյան պատերազմի հետ: Այսպես, 2021թ. ՀՀ պետական բյուջեից իրականացվել է 1,988.0 մլրդ դրամի ծախս, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածում կատարված ծախսերի նկատմամբ ավելի է 4.9%-ով: Ծախսերի աճը պայմանավորված է ընթացիկ ծախսերի 7.2% աճով, իսկ կապիտալ ծախսերը նվազել են շուրջ 11.5%-ով: Կապիտալ ծախսերի նվազումը նույնպես պայմանավորված է բազայի էֆեկտով, քանի որ նախորդ տարվա նոյեմբերին Արցախյան պատերազմով պայմանավորված՝ կտրուկ աճել էին կապիտալ ծախսերը:

Բյուջեի ընդհանուր փաստացի ծախսերը 2021թ. գերազանցել են բյուջեի ճշտված պլանով⁷ նախատեսված ծավալը շուրջ 1.8%-ով: Սակայն, գերակատարումը պայմանավորված է ընթացիկ ծախսերի շուրջ 3.6% գերակատարմամբ, մինչդեռ կապիտալ ծախսերը թերակատարվել են շուրջ 11.8%-ով: Բյուջեի կատարողականի ցուցանիշները թույլ են տալիս արձանագրել, որ կառավարությունը կապիտալ ծախսերի կարևորությունը դեռևս չի գիտակցում, քանի որ դրանք և՛ նվազել են նախորդ տարվա համեմատ, և՛ զգալիորեն թերակատարվել են:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը -), ժամանակահատվածի վերջի դրությամբ, մլրդ դրամ



⁷ Կատարողականի հաշվարկն իրականացվել է 2021թ. սեպտեմբերի վերջի դրությամբ ճշտված պլանի համեմատ: Կատարողականի ցուցանիշները կարող են փոխվել տարեկան ճշտված պլանի կիրառման պարագայում, որը, սակայն, հասանելի կլինի 2021թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հրապարակումից հետո:


Պետական բյուջեի պակասուրդը զգալիորեն աճել է՝ մոտենալով ճգնաժամային տարվա պակասուրդին: 2021թ. դեկտեմբերին պետական բյուջեի ծախսերը զգալիորեն գերազանցել են եկամուտներին, ինչի արդյունքում բյուջեի պակասուրդը մեծացել է շուրջ 81.5 մլրդ դրամով: Պակասուրդի ընդհանուր ծավալը կազմել է 303.9 մլրդ դրամ՝ ընդամենը 30 մլրդ դրամով ավելի փոքր ճգնաժամային տարվա՝ 2020թ. պակասուրդից: Ընդ որում, ինչպես արդեն նշել ենք, ծախսերի աճը պայմանավորված է ընթացիկ ծախսերի աճով, հետևաբար, կապիտալ ծախսերի նվազման պայմաններում նման պակասուրդի ձևավորումը խնդրահարույց է: Ընթացիկ ծախսերը չեն նպաստում հետագա տարիների տնտեսական աճի ձևավորմանը, հետևաբար դրանց համար ներգրավված պետական պարտքն անհարկի մեծացնում է կառավարության պարտքային բեռը:

5.4. Պետական պարտք

2021թ. դեկտեմբերի վերջի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 9,225.6 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ աճելով 15.8%-ով: Կառավարության պարտքը նույն ժամանակահատվածում նույնպես զգալիորեն աճել է՝ կազմելով 8,767.9 մլն ԱՄՆ դոլար և 2020թ. նույն ամսվա համեմատ ավելանալով 16.8%-ով: Պարտքի աճը պայմանավորված է և՛ ներքին, և՛ արտաքին պարտքի աճով:

Դեկտեմբերի դրությամբ պետական կարճաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքը նախորդ ամսվա համեմատ աճել է ևս 0.2 տոկոսային կետով՝ հասնելով 9.0%-ի (տարեսկզբից աճը կազմել է 2.9 տոկոսային կետ), իսկ միջնաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքը նույնների համեմատ նվազել է 0.2 տոկոսային կետով՝ կազմելով 9.7%, սակայն տարեսկզբի համեմատ աճը կազմել է շուրջ 2.0 տոկոսային կետ: Արդյունքում, ՀՀ կառավարության պարտքի գծով ծախսերը աճել են, իսկ պարտքի վերաֆինանսավորումը ներքին ռեսուրսների հաշվին՝ դժվարացել:


Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ

Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճ, %




12-ամսյա գնաճի տեմպը դանդաղել է 2021թ. դեկտեմբերին՝ բազայի էֆեկտի հաշվին, սակայն գների աճը շարունակվել է: 12-ամսյա գնաճն ընթացիկ տարվա դեկտեմբերին կազմել է 7.7%՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 1.9 տոկոսային կետով: Սակայն, պետք է նշել, որ դանդաղումը պայմանավորված է նախորդ տարվա դեկտեմբերին գների կտրուկ աճի առկայությամբ՝ բազայի էֆեկտով: Դրա մասին է խոսում այն, որ 2021թ. դեկտեմբերին նախորդ ամսվա՝ նոյեմբերի համեմատ սպառողական գներն աճել են 1.6%-ով, ինչը նշանակում է, որ

գների աճի տեմպը չի դանդաղել, իսկ 12-ամյա գնաճի ցուցանիշի դանդաղումը զուտ վիճակագրական երևույթ է:


6.2. Ավանդներ

Գծապատկեր 16. Ավանդների 12-ամյա աճը, %



2021թ. դեկտեմբերին առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալների աճը դանդաղել է՝ հիմնականում ոչ ռեզիդենտների ավանդների նվազմամբ պայմանավորված: Դեկտեմբերի վերջի դրությամբ ավանդների ընդհանուր ծավալները նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ աճել են 8.5%-ով՝ դանդաղելով 4.1 տոկոսային կետով: Ավանդների աճը ապահովվել է ռեզիդենտների ավանդների շուրջ 17.6% աճով, մինչդեռ ոչ ռեզիդենտների ավանդների ծավալը նվազել է 14.9%-ով: Հարկ է նշել, սակայն, որ ոչ ռեզիդենտների ավանդները դեկտեմբերին նույնաբերի համեմատ նվազել են ընդամենը 1.6%-ով, իսկ 14.9% ցուցանիշը արձանագրվել է նախորդ տարվա դեկտեմբերին՝ ավանդների կտրուկ աճի պայմաններում, որն էլ իր հերթին աճել էր դրամի արժեզրկման հետևանքով:

Գծապատկեր 17. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ




Ավանդների աճին շուրջ 6.7 տոկոսային կետով դրական նպաստում են ունեցել տնային տնտեսությունների ավանդների աճը, իսկ ձեռնարկությունների ավանդներն աճել են 30.1%-ով և ընդհանուր ավանդների աճին նպաստել են 4.9 տոկոսային կետով:

6.3. Վարկեր


Վարկերի ծավալների նվազման տեմպը 2021թ. դեկտեմբերին խորացել է նույնաբերի համեմատ: ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի (արտարժույթով և ՀՀ դրամով) ծավալը 2021 թվականի դեկտեմբերին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ նվազել է շուրջ 5.1%-ով:

Գծապատկեր 18. 2021թ. վարկերի 12-ամսյա աճերն ըստ վարկառուների ռեզիդենտության, %



Ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալները նվազել են առաջանցիկ տեմպով՝ շուրջ 18.5%-ով և ընդհանուր վարկերին ունեցել են 1.1 տոկոսային կետով բացասական նպաստում: Ընդ որում, ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալները նվազող են եղել 2021թ. գրեթե բոլոր ամիսներին: Ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալները նվազել են 4.3%-ով և վարկերի ընդհանուր ծավալին ունեցել են -4.1 տոկոսային կետ նպաստում:


Գծապատկեր 19. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը 2021 թվականին, %



Ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալների նվազումը հիմնականում պայմանավորված է իրավաբանական անձանց վարկերի շուրջ 10.9%-ով նվազմամբ, որի նպաստումը ռեզիդենտների ընդհանուր վարկերին

կազմել է -6.3 տոկոսային կետ: Այդ երևույթը խոսում է այն մասին, որ իրավաբանական անձինք հետաձգում են իրենց ներդրումային ծրագրերը՝ մի կողմից՝ վարկեր չվերցնելով և մյուս կողմից՝ ազատ դրամական միջոցները բանկերում որպես ավանդ ներդնելով:

Գծապատկեր 20. Տնտեսության ճյուղերի նպաստումները վարկերի աճին, տոկոսային կետ



Վարկերի կառուցվածքն ըստ տնտեսության ճյուղերի⁸ ուսումնասիրելու պարագայում կարող ենք նկատել, որ վարկերի նվազումը պայմանավորված է գրեթե բոլոր ոլորտներում վարկավորման նվազմամբ: Բացառություն են կազմում հիմնականում հիպոթեքային և շինարարության ոլորտին տրամադրվող վարկերի աճերը, որոնք ընդհանուր վարկերի աճին ունեցել են համապատասխանաբար 4.3 և 1.1 տոկոսային կետով դրական նպաստում: Դա բացատրվում է հիպոթեքային վարկերի տոկոսավճարների համար եկամտային հարկի վերադարձի հնարավորությամբ և ապագայում դրա վերացման հեռանկարով:

7. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ


Կորոնավիրուսի դեպքերը նվազել են 2021թ. դեկտեմբերին, սակայն 2022թ. հունվարից սկսել են աճել: 2021թ. դեկտեմբերին համավարակի նոր գրանցված դեպքերի միջին օրական ցուցանիշը զգալիորեն նվազել է՝ հասնելով

⁸ Վարկերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են ինչպես ոլորտային դասակարգմամբ, այնպես էլ ըստ ռեզիդենտության և տնտեսության հատվածների դասակարգման: Տարբեր դասակարգումներով ներկայացվող տվյալները տարբերվում են միմյանցից, ինչը բացատրվում է ՀՀ ԿԲ կողմից տեղեկատվության հավաքագրման տարբերություններով և չի մանրամասնվում: Այդ պատճառով, ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալները մի դեպքում նվազում են 4.3%-ով, իսկ մյուս դեպքում՝ 6.1%-ով:

207-ի, իսկ մահվան միջին օրական դեպքերը կազմել են 13՝ նոյեմբերի 41 դեպքի դիմաց: 2022թ. հունվարին, հիվանդության նոր հայտնաբերված դեպքերի թիվը սկսել է աճել, սակայն մահացության դեպքերը դեռևս ցածր են:

Աշխարհի մյուս երկրների հետ համեմատության մեջ ՀՀ-ում տիրող իրավիճակը փոքր-ինչ բարելավվել է: Մեկ միլիոն բնակչության հաշվով գրանցված դեպքերի թվով հունվարի 31-ի դրությամբ Հայաստանը զբաղեցնում է աշխարհում 76-րդ տեղը՝ նախորդ ամիս զբաղեցրած 47-րդ տեղի փոխարեն, իսկ մահվան դեպքերի թվով՝ 19-րդ տեղը նախորդ ամսվա 16-րդ տեղի փոխարեն:

Գծապատկեր 21. Կորոնավիրուսի վարակման և մահացության միջին օրական դեպքերը Հայաստանում



* 2022թ. հունվարի 31-ի դրությամբ

8. ԱՄՓՈՓՈՒՄ

1. Երկնիշ տնտեսական աճը, ինչպես նաև ճգնաժամից ուժեղացած տնտեսությամբ դուրս գալու խոստումներն այդպես էլ մնացին չիրականացված: 2021թ. փաստացի արձանագրվել է ՏԱՅ-ի 5.8% աճ, ինչը բնականաբար հեռու է կառավարության անդամների կողմից հնչեցվող երկնիշ աճից (ինչպես և կանխատեսում էին մի շարք մասնագետներ), ինչպես նաև չի արտացոլում տնտեսական վերականգնում: Տնտեսական վերականգնման մասին հնարավոր կլինե՞ր խոսել, եթե 2021թ. տնտեսական արդյունքն իրական արտահայտությամբ առնվազն հավասար լիներ մինչճգնաժամային տարվա՝ 2019թ. արդյունքին: Այսպիսով, 2021թ. տնտեսական ակտիվությունը շուրջ 2.1%-ով ցածր է եղել 2019թ. համապատասխան ցուցանիշից:

2. Տնտեսության կառուցվածքում դրական փոփոխություններ չեն նկատվում: ՏԱՅ-ին նպաստող հիմնական ճյուղերը տարվա արդյունքներով եղել

են առևտուրը և ծառայությունները, որոնք սակայն, 2019թ. համեմատ նվազող են եղել: Ընդ որում, առևտրի և ծառայությունների բարձր նպաստումները ՏԱՑ-ին պայմանավորված են 2020թ. սահմանափակումների առկայությամբ: Այսինքն՝ համեմատվող տարում այդ գործունեության տեսակները եղել են զգալիորեն սահմանափակված, իսկ 2021թ. այդ սահմանափակումները չեն գործել: Արդյունքում գրանցվել է բարձր աճ, որը սակայն բավարար չի եղել 2019թ. ծավալները վերականգնելու համար: Արդյունաբերության աճը բավական ցածր է եղել 2021թ.՝ շուրջ 3.3%, և ընդհանուր տնտեսական ակտիվությանն ունեցել է փոքր՝ 0.9 տոկոսային կետ նպաստում: Դա խնդրահարույց է, քանի որ արդյունաբերության աճը, ի տարբերություն, օրինակ, առևտրի աճի, հանգեցնում է նաև տնտեսության ներուժի աճին, հետևաբար՝ նաև հետագա տարիներին տնտեսական աճ գեներացնելու հնարավորությունների մեծացմանը: Մինչդեռ ՀՀ տնտեսական աճի 2021թ. կառուցվածքը հուսադրող չէ ապագա զարգացումների տեսանկյունից:

3. 2021թ. հարկային եկամուտներն աճել են 14.6%-ով, որից շուրջ 4.0 տոկոսային կետը պայմանավորված է եղել օրենսդրական փոփոխություններով (դրոշմանիշային վճարների բարձրացում և հանքարդյունաբերության ոլորտում արտահանման տուրքի սահմանում): Ընդ որում, եթե հաշվի չառնենք նշված օրենսդրական փոփոխությունների ազդեցությունը, ապա հարկերի աճը կլինի շուրջ 10.6%, մինչդեռ տնտեսական ակտիվության անվանական աճը, ըստ նախնական գնահատականի, կազմել է 13.4% (5.8%՝ ՏԱՑ-ի իրական աճի և 7.2% միջին գնաճի պայմաններում): Ստացվում է, որ հարկերի աճը հետ է մնում տնտեսական ակտիվության աճից, ինչն էլ արտացոլում է հարկային վարչարարության վատթարացումը:

4. Թեև 12-ամյա գնաճի տեմպը դանդաղել է դեկտեմբերին, սակայն գների մակարդակը շարունակում է աճել: Դեկտեմբերին արձանագրվել է 7.7% գնաճ՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 1.9 տոկոսային կետով: Սակայն, պետք է նշել, որ դանդաղումը պայմանավորված է բազայի էֆեկտով: Դրա մասին է խոսում այն, որ 2021թ. դեկտեմբերին նախորդ ամսվա՝ նոյեմբերի համեմատ սպառողական գներն աճել են 1.6%-ով, ինչը նշանակում է, որ գների աճի տեմպը չի դանդաղել, իսկ 12-ամյա գնաճի ցուցանիշի դանդաղումը զուտ վիճակագրական երևույթ է: ՀՀ ԿԲ-ն տարվա ընթացքում մի քանի անգամ բարձրացրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ գնաճային միջավայրին արձագանքելով, որոնցից վերջինը՝ 2021թ. դեկտեմբերին ևս 0.5 տոկոսային կետով: ԿԲ քաղաքականությունը, սակայն, դեռևս չի հանգեցրել գնաճի տեմպի դանդաղմանը:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: